



« ԳԱՎ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

գտնվող Փարիզի հայոց եկեղեցու նկուղի փոքր մատուռը՝ հարմար առիթով Հայաստան տեղափոխելու նպատակով, ինչն էլ իրականացրել է 1936թ. մայիսին: Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ Մուշեղ Աղայանի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողովի հովանու ներքո, Կոմիտասի մտերիմ բարեկամ Փանոս Թերլեմեզյանի, երաժշտագետ Ռուբեն Թերլեմեզյանի խոսքերից հետո, Հայկանուշ Դանիելյանի կատարմամբ «Հինար ես»-ի հնչյունների ուղեկցությամբ Կոմիտասի աճյունն ամփոփվում է Երևանի պանթեոնում՝ Ռոմանոս Մելիքյանի գերեզմանի հարևանությամբ, իսկ տարիներ անց պանթեոնն ամփոփող զբոսայգին անվանակոչվելու էր Կոմիտասի անունով:

Կոմիտասը դարակազմիկ երևույթ է, հայ երաժշտական մշակույթի այն բացառիկ երախտավորը, որի մասին գրվել են և շարունակվում են գրվել անմախառն բովանդակությամբ, ժողովածուներ, մենագրություններ, ատենախոսություններ, ժողովածուներ, հոդվածներ, հուշագրություններ, գեղարվեստական ստեղծագործություններ: Այդ աշխատությունների մեծաքանակությունն արդեն պայմանավորել է կոմիտասագիտության սկզբնավորումն ու զարգացումը:

Տարիներ ու տասնամյակներ շարունակ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը եղել է ու է կոմիտասագիտության կենտրոնը, քանի որ նրա գործունեության կարևորագույն ուղղություններից մեկը կոմիտասագիտությունն է:

Ծանրակշիռ է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը Կոմիտասի ստեղծագործական ժառանգության հրատարակման և ուսումնասիրության, այլ խոսքով՝ կոմիտասագիտության կայացման ու զարգացման գործում:

Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահությունը 1945-ի դեկտեմբերի 19-ի N 34 նիստում քննության է առնում երաժշտության պատմության ու

տեսության սեկտորի աշխատանքների վիճակը և հետագա խնդիրները, սեկտորի աշխատանքների բարելավման ուղղությամբ ընդունվում են մի շարք արմատական առաջարկներ: Մասնավորապես՝ առաջարկվում է 1946-ին ստեղծել Կոմիտասի անվան կաթինետ՝ նրա երաժշտական ժառանգությունը խորը ուսումնասիրելու նպատակով, ուժեղացնել ժողովրդական և գուսանական երգերի, պարերի հավաքման, գրանցման և ուսումնասիրման աշխատանքները, հայկական խազերի ուսումնասիրությունը, արխիվային նյութերի ձեռքբերումն ու նրանց լավագույն պահպանումը (քարտազրում, անտացիա, ծրարում, արտանկարում և այլն):

Երաժշտության պատմության ու տեսության սեկտորի բազայի վրա ստեղծվում է Արվեստների պատմության ու տեսության սեկտորը, որի գործունեության հիմնական ուղղություններից մեկն էլ դառնալու էր կոմիտասագիտությունը:

Կոմիտասագիտության մեջ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ներդրումը ընթացել է 4 ուղղությամբ:

1. Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը

1949 թվականի սեպտեմբերի 26-ին՝ Կոմիտասի ծննդյան 80-ամյակի օրը, Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդը որոշում է ընդունում Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակության մասին, որի իրագործումը հանձնարարվում է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիային:

Ակադեմիայի Նախագահությունը 1950թ. հունվարի 25-ի N 4 նիստում որոշում է 1950-ին սկսել Կոմիտասի երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը: Խմբագրական հանձնախմբում ընդգրկվում են Ռոբերտ Աթայանը, Մուշեղ Աղայանը, Սամսոն Գասպարյանը, Քրիստափոր Քուշնարյանը, Մաթևոս Մուրադյանը, և 1960-ին Մարտիրոս Սարյանի ֆորագույն լույս է տեսնում Կոմիտասի երկերի ժողովածուի անդրանիկ հատորը:

➤3



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

1990 թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին Հայաստանում տեղի ունեցան խորհրդարանական ընտրություններ: Խորհրդային շուրջ 70-ամյա տիրապետության շրջանում դրանք մեր երկրում տեղի ունեցած առաջին այլընտրանքային ընտրություններն էին: Հունիսի 20-ին աշխատանքներն սկսեց ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը, որը, ի թիվս այլ հարցերի, ձեռնամուխ եղավ անկախության հռչակագրի ընդունմանը: Մինչ Հռչակագրի վերջնա-

կան տեքստի ընդունումը խորհրդարանը մաս-մաս քննարկում և քվեարկությամբ հավանության էր արժանացնում փաստաթղթի դրույթները: Օգոստոսի 23-ին քվեարկության է դրվում և ամբողջությամբ ընդունվում «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին» փաստաթուղթը: Այն հիմնվում էր ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թ. դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման վրա: Հռչակագրի համաձայն Հայկական ԽՍՀ-ն վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն (կրճատ՝ Հայաստան, ՀՀ): Ամրագրվեցին ժողովրդավարական պետություններին բնորոշ քաղաքացիական իրավունքները, հայտարարվեց խոսքի, մամուլի, ժողովների

ազատության մասին: Սահմանվում էր, որ ինքնիշխան ՀՀ-ի ամբողջ տարածքում գործում են միայն ՀՀ սահմանադրությունը և օրենքները, որոնք գերակա էին լինելու ԽՍՀՄ օրենքների նկատմամբ: Հանրապետությունում ստեղծվելու էին սեփական զինված ուժեր, ներքին գործեր, պետական և հասարակական անվտանգության մարմիններ: Հռչակագիրը հիմք էր ծառայելու գործող սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նաև ՀՀ նոր սահմանադրության մշակման համար: Սրանով հիմք դրվեց Հայաստանի անկախացման գործընթացին, որի արդյունքում վերջ տրվեց Հայաստանում կոմունիստական կուսակցության շուրջ 70-ամյա քաղաքական մենատիրությանը: Անկախության մասին հռչակագրի

ընդունումից հետո Գերագույն խորհուրդը ձեռնամուխ եղավ Հռչակագրի դրույթների կենսագործմանը: Օգոստոսի 24-ին օրենքներ և որոշումներ ընդունվեցին Հայկական ԽՍՀ-ի վերանվանման, պետական դրոշի, ինչպես նաև զինանշանի և պետական օրհներգի մասին: Վերականգնվեցին Հայաստանի առաջին հանրապետության խորհրդանիշները: Խորհրդային Միության աստիճանական փլուզման պայմաններում 1991 թ. մարտի 1-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը որոշեց չմասնակցել մարտի 17-ին նորացված պայմանագրով անցկացվող ԽՍՀՄ-ի որպես միասնական պետության, պահպանման հարցով հանրաքվեին: Նույն օրը ՀՀ Գերագույն խորհուրդը, հիմնվելով Հայաստանի անկա-

➤2

ԸՇ գիտությունների ազգային ակադեմիան Ամուլսարի ծրագրի վերաբերյալ

Հաշվի առնելով Ամուլսարի ոսկեբեր քվարցիտների հանքավայրի շահագործման ծրագրի նկատմամբ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի դիրքորոշման վերաբերյալ հասարակության և լրատվամիջոցների մեծ հետաքրքրությունը՝ հայտնում ենք ՀՀ շրջակա միջավայրի նախարար Էրիկ Գրիգորյանից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան պաշտոնական նամակ ստացել է սույն թվականն սեպտեմբերի 3-ին (N 1/02.1/12286), որով նա խնդրում է հանձնարարել ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտին 1-օրյա ժամկետում տալ կարծիք Ամուլսարի հանքավայրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լիարժեքության վերաբերյալ: Մինչդեռ, ՀՀ շրջակա միջավայրի նախարարի հայտարարության համաձայն, նախարարությունը Ամուլսարի ծրագրի գործընթացի վերաբերյալ վերջնական կարծիք պետք է ներկայացնեք սույն թվականի սեպտեմբերի 4-ին: Հայտնում ենք, որ նախանշված ժամկետում հնարավոր չէ տալ լիարժեք գիտական հիմնավորում Ամուլսարի ծրագրին՝ հաշվի առնելով ծրագրի վերաբերյալ փաստաթղթերի մեծ ծավալը և խնդիրների լայն շրջանակները: Միևնույն ժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԳԱԱ Ա. Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի մասնագետները, ի պատասխան ինստիտուտի տնօրենին ավելի վաղ սույն թվականի օգոստոսի 29-ին ուղարկ-



ված ՀՀ շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Իրինա Ղափլանյանի (2/02.1/20160) նամակի, ուղարկել են Ամուլսարի ծրագրի առանձին խնդիրների վերաբերյալ իրենց գիտական ոլորտին առնչվող խնդիրների վերաբերյալ առանձին կարծիքները և եզրակացությունները:
 ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան պատրաստ է գիտական հիմնավորում տալ Ամուլսարի ծրագրի փաստաթղթերին ողջամիտ ժամկետում:
ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



760 ԱՐԺԵ-ՔԱՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ ԵՆ ԵՐՈՒՍԱԳՆԵՄՈՒՄ

Երուսաղեմի հայոց պատրիարքարանի Մայր դիվանը սկսել է հանդերձավորել իր վերականգնողական բաժինը: Շարունակաբար ձեռք են բերվում անհրաժեշտ մանրիչներն ու տարբեր տեսակի արդիական սարքավորումներ: Գործընթացը նախաձեռնել և վերահսկում է Երուսաղեմի հայոց պատրիարք Նուրիհան արք. Մանուկյանը, իսկ ղեկավարում է արխիվի տնօրեն Արշակ Բանուչյանը:
 Ըստ «Միրոր-Սփեքթեր» շաբաթաթերթում տպագրված լրատվության, զանազան նյութերի, փաստաթղթերի և հրամանագրերի մշակման, փաստափաստման և վերականգնման աշխատանքներին մասնակցում են Հայաստանի Մեսրոպ Մաշտոցի անվան մատենադարանի աշխատակիցները՝ ավագ վերականգնողներ Սուսաննա Կիրակոսյանը և Էմմա Սարգիսովան, ինչպես նաև Գայանե Էլիսայանը՝ Մատենադարանի վերականգնողական բաժնի վարիչը: Նրանք արդեն վերականգնել են մոտ 760 արժեքավոր փաստաթղթեր և արխիվային այլ նյութեր, ներառյալ Գրիգոր Շղթայակիրի (1715-1749) և Թեոդորոս Վանեցի (1800-1818) պատրիարքների հրովարտականներն ու նամակները, ինչպես նաև Սալահ էլ-Դիմի չափազանց կարևոր մագաղաթե հրամանագիր-թույլտվությունները:
 Նուրիհան պատրիարքը այցելելով նորաբաց բաժին բարձր է գնահատել մասնագետների կատարած աշխատանքը և հույս հայտնել, որ համագործակցությունը պատրիարքարանի և Մատենադարանի միջև կշարունակվի:

Հ. Ծ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

➤1 խության հռչակագրի դրույթների ու նպատակների վրա, որոշում կայացրեց 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու հարցով հանրաքվե անցկացնել:
 Լեռնային Ղարաբաղը Հայաստանի Հանրապետությանը միավորելը համարելով ոչ մտուհի ապագայի խնդիր՝ ՀՀ իշխանություններն Արցախի ղեկավարությանը հորդորեցին Լեռնային Ղարաբաղն անկախ հայտարարել: 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախությունը՝ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի և նրան կից Շահումյանի շրջանների սահմաններում: Տվյալ իրավիճակում Լեռնային Ղարաբաղի անկախությունը հռչակելն ամենամիշտ և հեռանկարային որոշումն էր:
 Հանրապետության անկախության վերականգնման խնդրում հայությունը միակնունդ էր: Չափազանց բարձր էր նաև քաղաքացիների ոգևորությունն ու սպասումները, ինչն արտահայտվեց հանրաքվեի մասնակցության չափազանց բարձր ցուցանիշով՝ 2.056.758 մարդ կամ քվեարկության իրավունք ունեցող քաղաքացիների 95,05 %-ը: Քվեարկության դրված՝ «Համաձայն եմ, որ Հայաստանի Հանրապետություն-

ըն լինի անկախ ժողովրդավարական պետություն» ԽՍՀՄ-ի կազմից դուրս» հարցին կողմ քվեարկեց ՀՀ քաղաքացիների զերակշիռ մասը՝ 2.042.627 մարդ (քվեարկելու իրավունք ունեցողների 94,39 %-ը): Դեմ քվեարկողների թիվը 10.002 էր, իսկ 4.129 քվեաթերթիկ անվավեր էր ճանաչվել: Հանրաքվեն անցավ առանց միջադեպերի ու խախտումների: ՀՀ Գերագույն խորհրդի սեպտեմբերի 23-ի նիստում պաշտոնապես ազդարարվեց հանրաքվեի արդյունքների մասին, և Գերագույն խորհուրդը, հիմք ընդունելով անցկացված հանրաքվեն, Հայաստանի Հանրապետությունը հռչակեց անկախ պետություն: Սեպտեմբերի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդը հատուկ հայտարարություններով ԽՍՀՄ պետական խորհրդին, ՄԱԿ-ին, տարբեր պետություններին տեղեկացրեց հանրաքվեի արդյունքի և Հայաստանի Հանրապետությունն անկախ պետություն հռչակելու մասին:
 Անկախության հանրաքվեին պատրաստվելուն զուգահեռ, խորհրդային մյուս հանրապետությունների նմանությամբ, ՀՀ Գերագույն խորհուրդը որոշեց Հայաստանի Հանրապետությունում հիմնել հանրապետության նախագահի պաշտոն: Հոկտեմբերի 16-ին տեղի ունեցած ՀՀ նախագահի ընտրություններին մասնակցեց 1.518.059 մարդ՝ ընտրական իրավունք ունեցողների 70,4 %-ը:


Այսպես ծնունդ առավ Հայաստանի երրորդ հանրապետությունը՝ որպես Հայաստանի առաջին (1918-1920 թթ.) և երկրորդ (խորհրդային) (1920-1991

թթ.) հանրապետությունների ժառանգորդ: Մերօրյա Հայաստանի Հանրապետությունը 1918 թ. մայիսին ստեղծված հայկական անկախ պետականության առանց ընդհատումի շարունակական գոյության իրենցն ապացույցն է:

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
 Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ



Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած, Ըազարիազար լուսապայծառ հոգիներով ճառագած, Ու երկնահաս քո բարձունքին, Կրարատի սուրբ լանջին, Կենսաժպիտ իր շողերը պիտի ժպտան առաջին, Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով, Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով, Իմ նոր հայրենիք, Ըզդիր հայրենիք...



Ուսուցիչ պարուններ ու քույրեր,
զգուշությամբ ու երկյուղածությամբ
մոտեցե՛ք դաստիարակության գործին.
խիստ փափուկ պաշտոն մըն է ձերը:
Դաստիարակելու կոչված եք սերունդ մը,
որ ապագա ազգն է: Միսալ ուղղությամբ՝
ազգ մը կը խորտակե՛ք վերջը:

ԿՈՄԻՏԱՍ



րային ծրագրում» կարևորվել էր Կոմիտասի գիտական կենսագրության ուսումնասիրությունը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը իր լուսնան ունի նաև
Երևանում Կոմիտասի թանգարանի ստեղծման գործում:
Կոմիտասի ծննդյան 140-ամյակի առթիվ գրված «Կոմի-
տասը և հայ երաժշտական արվեստի զարգացման ու-
ղիները» հոդվածում, որը լույս տեսավ «Պատմաբանսի-
րական հանդեսի» 2010 թվականի առաջին համարում,
հանդես եկա Երևանում Կոմիտասի թանգարան բացե-
լու առաջարկությամբ. «Կոմիտասն այսօր Երևանում չու-
նի թանգարան. նրա իրերը, ձեռագրերը, նաև ոռոյալն այ-
սօր ծվարած են Ե. Չարենցի անվան գրականության և

...ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մինչ այդ՝ սեկտորը 1950-ին հրատարակում է Կոմիտասի ազգագրական ժողովածուն:

Ինչպես հայտնի է՝ իրենց հիմնական մասով Կոմի-
տասի «թղթերը» (այսպես անվանվել է նրա ողջ գրա-
վոր ժառանգությունը), պահված են եղել Պոլսի Պատ-
րիարքարանում: Այդ մասը հետո հանձնվել է Փարի-
զի Կոմիտասյան խնամատար հանձնաժողովին: Նույն
հանձնաժողովը կոմիտասյան մի շարք կարևոր ձեռագ-
րեր ձեռք է բերել նաև առանձին անհատներից և որոշ
գործեր տպագրելուց հետո, իր հավաքածն ուղարկել է
Երևանի գրականության և արվեստի թանգարան:

Անշուշտ, կոմիտասյան ձեռագրերի Երևան տեղա-
փոխվելու գործում անուրանալի է ՀՀ ԳԱԱ արվեստի
ինստիտուտի, իսկ դրանից առաջ՝ Արվեստների պատ-
մության և տեսության սեկտորի, հատկապես նրա վա-
րիչ Ռուբեն Զարյանի և գիտքարտուղար Մաթևոս Մու-
րադյանի դերը:

Ակադեմիայի նախագահության 1953թ. դեկտեմբե-
րի 23-ի N 23 նիստում Հայաստանի գիտությունների
ակադեմիայի Արվեստի պատմության և տեսության
սեկտորի վարիչ է հաստատվում Ռուբեն Զարյանը.
շուտով նամակագրական կապ է հաստատվում վեր-
ջինիս և Մարգարիտ Բաբայանի միջև, ինչի շնորհիվ
Փարիզից ստացվում է Կոմիտասի արխիվի նշանակա-
լի մասը, որը գտնվում էր «Կոմիտաս» խնամատար
հանձնաժողովի տրամադրության տակ:

Մ. Բաբայանի հետ նամակագրությունը հետագա-
յում շարունակում է Ռոբերտ Աթայանը, և հետագա
տասնամյակների ընթացքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինս-
տիտուտի երաժշտագետների մի քանի սերունդների
ջանքերով հրատարակվեց Կոմիտասի Երկերի ժողո-
վածուն՝ 14 հատորով (1960-2006), որը հրատարա-
կության պատրաստեցին Ռոբերտ Աթայանը և Գևորգ
Գյոդակյանը: Առաջին անգամ հրատարակվեց Կոմի-
տասի ողջ երաժշտական ժառանգությունը, որն
ընդգրկում է՝

- մեներգերը (հատոր 1, 1960, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 4, 1976, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 5, 1979, խմբագրությամբ Ռ. Աթայանի),
- խմբերգերը (հատոր 2, 1965, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 3, 1969, խմբագրությամբ Ռ. Աթայանի, հատոր 4, հատոր 5),
- դաշնամուրային ստեղծագործությունները (հատոր 6, 1982, խմբագրությամբ Ռ. Աթայանի),
- Պատարագը (հատոր 7, 1997, խմբագրությամբ Ռ. Աթայանի),
- հոգևոր ստեղծագործությունները (հատոր 8, 1998, խմբագրությամբ Ռ. Աթայանի, Գ. Գյոդակյանի, Դ. Դեբրյանի),
- երաժշտական ազգագրական ժառանգությունը՝ զետեղված 9-14 հատորներում:

Կոմիտասի Երկերի ժողովածուի ակադեմիական հրատարակությունը, հիրավի, ոչ միայն բացառիկ իրադարձություն է հայ ժողովրդի երաժշտական կյանքում, այլև կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող համազգային մեծ ու նշանակալի երևույթ:

2. Գիտական ուսումնասիրություններ
Կոմիտասագիտության մեջ կարևոր ներդրում են Գևորգ Գյոդակյանի «Կոմիտաս» (2000), «Комитас» (1969) և «Komitas» (2014) ուսումնասիրությունները,

Ռուբեն Թերլեմեզյանի «Կոմիտաս» (1992) և Տաթևիկ Շախկուլյանի «Կոմիտասի ստեղծագործության վաղ շրջանը (1891-1899)» (2014) մենագրությունները, ինչ-պես նաև Մաթևոս Մուրադյանի, Ռոբերտ Աթայանի, Գևորգ Գյոդակյանի, Կարինե Խուրաթաշյանի, Անահիտ Գրիգորյանի, Աննա Արևշատյանի, Անահիտ Բաղդասարյանի, Աննա Ասատրյանի, Տաթևիկ Շախկուլյանի և այլոց գիտական հոդվածներն ու զեկուցումները: Ի դեպ՝ երիտասարդ հետազոտող Տ.Շախկուլյանի հոդվածաշարը 2011-ին արժանացավ ՀՀ ԳԱԱ «Լավագույն գիտական աշխատանք» մրցանակաբաշխության առաջին մրցանակին՝ «Արվեստ, լեզու և գրականություն» անվանակարգում:

3. «Կոմիտասական»
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտն իրականացրել է Կոմիտասի ժառանգության առանձին հարցերին նվիրված գիտական ուսումնասիրությունների հրատարակումը «Կոմիտասական» ժողովածուի երկու հատորներում (1969, 1981):

1969 թվականին՝ Կոմիտասի ծննդյան 100-ամյա հոբելյանի շրջանակներում, ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչությունը լույս է ընծայում Կոմիտասականի առաջին հատորը, որի խմբագիրն էր Ռոբերտ Աթայանը: Խմբագրական կոլեգիայի կազմում ընդգրկվել էին Ռոբերտ Աթայանը (գլխավոր խմբագիր), Գևորգ Գյոդակյանը, Նիկողոս Թահմիզյանը, Լևոն Հախվերդյանը և Մաթևոս Մուրադյանը:

«Կոմիտասի բազմաբեղուն ժառանգությունն իր բոլոր հատվածներով՝ երաժշտական ազգագրություն, ստեղծագործություն, գիտական հետազոտություններ, կատարողական արվեստ, նրա կյանքն ու հասարակական-լուսավորչական գործունեությունը, գիտապատմական և տեսական հսկայական հետաքրքրություն ունեն,- կարող են ենթ հատորի՝ «Ինստիտուտի կողմից» առաջաբանում,- Հայ մեծ երաժշտագետի Երկերի ժողովածուի արդեն սկսված հրատարակության հետ մեկտեղ, ԳԱ արվեստի ինստիտուտը ձեռնարկում և այս հատորով սկիզբ է դնում նրա ժառանգության առանձին հարցերին նվիրված գիտական ուսումնասիրությունների հրատարակման: «Կոմիտասականի» Ա հատորը, որ լույս է տեսնում Կոմիտասի ծննդյան հարյուրամյակի հոբելյանի առթիվ, ընդգրկում է նրա երաժշտական ու գիտական աշխատանքների, ստեղծագործական ոճի և ստեղծագործությունների մեկնաբանության գերազանցապես տեսական ուսումնասիրություններ և հուշեր: Նման հատորներ, նյութերի և հեղինակների ավելի լայն ընդգրկումով, պարբերաբար կհրատարակվեն նաև ապագայում»:

1981-ին ՀՍՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ հրատարակվեց «Կոմիտասականի» երկրորդ հատորը, որտեղ ընդգրկված հոդվածներն ու ուսումնասիրությունները նվիրված էին Կոմիտասի կյանքի, գործունեության և ստեղծագործական հարցերին, ինչպես նաև Կոմիտասի ձեռագիր ժառանգության հրատարակումներ՝ «Անուշ» օպերայից և 1893 թ. հոգևոր երգերի ժողովածուից:

4. Կոմիտասի գիտական կենսագրությունը
Դեռևս 1973-ին «Արվեստի ինստիտուտի գիտահետազոտական աշխատանքների քսանամյա հեռանկա-

արվեստի թանգարանում, մինչդեռ վաղուց է հասունացել Կոմիտասի առանձին թանգարան ունենալու անհրաժեշտությունը, թանգարան, որը կդառնա կոմիտասագիտության զարգացման խոշորագույն կենտրոնը և կծավալի կոմիտասյան ավանդույթներին ու պատգամներին արժանի բազմակողմանի գործունեություն»:

Անցավ մի քանի տարի, և 2015-ի հունվարի 29-ին, Երևանում իր դռները բացեց Կոմիտասի թանգարան-ինստիտուտը:

Ինչպես տեսնում եք՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում Կոմիտասի ժառանգության ուսումնասիրությունը հորելյանից հորելյանի չի իրականացվում: Այն մեր մշտական հետաքրքրությունների կենտրոնում է: Եվ այդուհանդերձ՝ այս հոբելյանական տարում կոմիտասագիտական միջոցառումները մեր ինստիտուտի գիտական գործունեության առանցքն են կազմում, որին ձեռնամուխ են եղել գիտական անձնակազմի ներկայացուցիչներից շատերը:

Կոմիտասի 150-ամյա հոբելյանի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը նախատեսում է հետևյալ միջոցառումները՝

1. Հոբելյանին ընդառաջ՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս կտեսնի «Կոմիտասական» ժողովածուի 3-րդ հատորը, որը կիրատարակվի ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ և կշարունակի «Կոմիտասական»-ի՝ 1981 թվականին կտրված թելը:

2. ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս կտեսնի ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանի «Կոմիտասը հայ կերպարվեստում» եռալեզու (հայերեն, ռուսերեն և անգլերեն) պատկերագիրը, որը նույնպես կիրատարակվի ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունները ֆինանսավորող համահայկական հիմնադրամի աջակցությամբ:

3. 2019 թ. սեպտեմբերի 20-22-ը Մոսկվայում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի հայագիտական կենտրոնի հետ համատեղ կգումարի գիտական կոնֆերանս՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 150-ամյա հոբելյանին, որին ակտիվորեն կմասնակցեն թե՛ մեր ինստիտուտի, և թե՛ հանրապետության մյուս առաջատար մասնագետները:

4. Արվեստի ինստիտուտի հոբելյանական միջոցառումների եզրափակիչ ակորդը կդառնա «ԿՈՄԻՏԱՍ – 150» գիտական մատաչջանը, որը ՀՀ ԳԱԱ գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ կգումարվի 2019թ. հոկտեմբերին:

Ասեմ նաև, որ հոբելյանական տարվա ընթացքում ինստիտուտի աշխատակիցների հետաքրքիր հոդվածները կտպագրվեն ՀՀ ԳԱԱ գիտական ու գիտահանրամատչելի պարբերականներում՝ «Բանբեր հայագիտության», «Պատմաբանսիրական հանդես», «Գիտության աշխարհում», ինչպես նաև ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նորաստեղծ՝ «Արվեստագիտական հանդեսում»:

Աննա ԱՍՍՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր



Տասնամյակներ շարունակ բան. գիտ. դրկտոր Անուշավան Զաքարյանը հարյուրավոր հոդվածներով և շուրջ երկու տասնյակ մենագրություններով իր ներդրումն է ունեցել հայ մշակույթի ու գրականության պատմության մեջ: Նրա գիտական հետազոտություններում առանձնահատուկ տեղ են գրավում հայ-ռուս գրական բազմաբնույթ առնչությունները: Գրականագետի սևեռուն ուշադրության կենտրոնում հիմնականում եղել են XX դարասկզբի, այսինքն՝ հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանի հայ իրականությունը, ազգային-մշակութային կյանքը, որի կենտրոնում իր անօրինակ ազգային, գրական ու հասարակական գործունեությամբ կանգնած է Աննայի հայոց բանաստեղծը՝ Յուլիան Թումանյանը: Այս շրջանն ուսումնասիրող ոչ մի հետազոտող չի կարող դարակազմի գրական, պատմագիտական, մշակութաբանական որևէ խնդիր արծարծելու կամ լուսաբանելու շրջանցել Թումանյանի վիթխարի դերը, առավել ևս երբ խոսքը վերաբերում է հայ-ռուս պատմամշակութային փոխհարաբերություններին, Հայկական հարցին ու Հայոց ցեղասպանության հիմնախնդիրներին: Հետևաբար, նրանցից յուրաքանչյուրն այս կամ այն չափով, կամ թե ակամա իր խոսքն է ատում թումանյանագիտության ոլորտում: Սակայն Ա. Զաքարյանի մոտ չի այդ ասպարեզ պատահական բնույթ չի կրում: Այն պայմանավորված է ոչ միայն գրականագետի հետաքրքրության շրջանակով, այլև մեծ բանաստեղծի կյանքի ու գործունեության ուսումնասիրության ոլորտին անկեղծ նվիրվածով: Հավաստումն ընթերցողի սեղանին դրված նրա «Ռուս գրողները և Յուլիան Թումանյանը» աշխատությունն է, որը հեղինակային հրատարակություն է՝ նվիրված Յուլիան Թումանյանի 150-ամյա հոբելյանին: Գաղտնիք չէ, որ խորհրդային տարիներին, մասնավորապես Թումանյանի 100-ամյակի շրջանակում, Թումանյանի մասին գրված և ոչ մի աշխատություն սեղանին չէր մնում և հրատարակվում էր միմյան պետական միջոցներով: Այսօր Հայաստանի Հանրապետության անկախության պայ-

Հուլիան Թումանյանի ծննդյան 150-ամյակի առթիվ

մաններում գիտական, այդ թվում՝ թումանյանագիտական աշխատությունների հրատարակությունները՝ նույնիսկ ազգային այսպիսի մեծ հոբելյանի օրերին, կապված են մեծ դժվարությունների հետ՝ պետական աջակցության գրեթե բացակայության պատճառով: Օգնության են հասնում որոշ հիմնադրամներ, հատկապես Հայաստանի Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Յուրի Սուվարյանի ջանքերով լույս աշխարհ են գալիս օտարալեզու հայագիտական աշխատություններ: Իհարկե, երբեմն էլ աջակցության ձեռք են մեկնում որոշ հրատարակչություն-

նախապատմությունը, առանձնացնում և կարևորում է հայ-ռուս գրական աղբյուրներին և այդ համատեքստում Թումանյանի գործունեությանը նվիրված բանաստեղծի դատեր՝ Նվարդ Թումանյանի «Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը» արժեքավոր աշխատությունը: Թումանյանի «Ախթամար» լեզենդի և «Համերգ» բանաստեղծության ռուսերեն առաջին թարգմանիչ Կ. Բալմոնտի՝ Թիֆլիս կատարած այցելությունների, դասախոսությունների և Թումանյանի հետ հանդիպումների մասին է մենագրության առաջին «Կ. Բալմոնտ. «Քեզ երկար կյանք, լույս

րառված են Կուլեբյակինի կյանքի, նրա և բանաստեղծի որդու՝ Վանի վերջին պարետ Արտավազդի մտերմության, զենեարալի և Թումանյանի հանդիպումների մասին ուշագրավ տեղեկություններ: Առաջին անգամ չէ, որ անվանի գրականագետն անդրադառնում է Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում Ս. Գորոդեցկու գործունեությանը: Խնդրո առարկա աշխատության մեջ առանձնացվում է միայն Ս. Գորոդեցկու և Թումանյանի մեծ բարեկամության պատմությունը, որը ներկայացվում է «Ս. Գորոդեցկի. Չեր անունը գաղափար է...» բաժնում: Ընդգծելով երկու բանաստեղծների

ՌՌԻՍ ԳԻՏՈՂՆԵՐԸ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ

ներ, անհատ հովանավորներ: Այնուամենայնիվ, բազմաթիվ հեղինակներ ստիպված են լինում իրենք իրենց սուղ միջոցներով ասպարեզ հանել իրենց աշխատությունները: Այս իմաստով նպաստավոր և որոշակի առումով պարտադրող հանգամանք էր ազգային մեծագույն բանաստեղծի 150-ամյակը՝ համազգային մեծ հոբելյանը: Եվ ահա ոլորտում գործող գրականագետներից յուրաքանչյուրը ձգտում է իր ներդրումն ունենալ այդ մեծ հոբելյանին: Հենց այս մղումով թումանյանագիտության նվիրյալները, մասնավորապես բան. գիտ. դրկտորներ Սազդա Ջանփոլարյանը, Իրմա Սաֆրազբեկյանը, պատմ. գիտ. թեկնածու Հանո Սուքիասյանը, բանաստեղծի թոռնուհիներից Սուրմա Թումանյանը (նաև տղերի հեղինակը խմբ.) և այլք հանդես են գալիս հեղինակային հրատարակություններով՝ Թումանյանի հոբելյանը նշանավորելով արժանի աշխատություններով ու հրատարակումներով: Այս հրատարակությունների շարքում է Ա. Զաքարյանի «Ռուս գրողները և Յուլիան Թումանյանը» աշխատությունը, որը հրատարակության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության հիմնադրամի գիտական խորհուրդը: Մենագրությունն ընդգրկում է XX դարի 10-ական թվականներին Թիֆլիսի գրական կյանքի մի շարք հետաքրքիր դրվագներ: Կովկասի մշակութային կենտրոնում՝ Թիֆլիսում, հայ և ռուս գրական-մշակութային նշանավոր իրադարձությունների համատեքստում ներկայացվում են ռուս նշանավոր մտավորականների ու գրողների՝ Կոնստանտին Բալմոնտի, Վալերի Բրյուսովի, Ալեքսանդր Կուլեբյակինի, Սերգեյ Գորոդեցկու, Բորիս Լազարևսկու և Աննայի հայոց բանաստեղծի գրական առնչությունները, հանդիպումներն ու մարդկային, բարեկամական ջերմ հարաբերությունները: Աշխատությունը բազում «Երկու խոսք»-ում հեղինակը, անդրադառնալով հարցի

Թումանյան» բաժինը: Վերագրի ընտրությունը պատահական չէ: Լինելով հայ պոետին ծոնված Բալմոնտի բանաստեղծության մի տողը՝ այն ընդգծում է ռուս բանաստեղծի հիացմունքը Թումանյանի ոչ միայն ստեղծագործության, այլև մարդկային կերպարի հանդեպ: Ուշագրավ է, որ թեև Թումանյանը «խոսքի վիրտուոզ» Բալմոնտին տաղանդավոր բանաստեղծ չի համարել, այնուամենայնիվ, ռուս պոետի համար նա եղել է «Արևելյան բանաստեղծների մեջ ամենին ինքնատիպ և ամենն գունագեղը» (էջ 13): Ուսումնասիրության հաջորդ՝ «Կ. Բրյուսով. Թումանյանը «ռուսական օրինետաղիայի» համոզված կողմնակից էր...», մասում հեղինակը շեշտադրում է հայ և ռուս բանաստեղծների՝ Բրյուսովի և Թումանյանի բարեկամության ամոռնալի էջերը, Թումանյանի պոետիկային տրված բրյուսովյան բարձր գնահատականի գրապատմական նշանակությունը: Աշխատանքի այս հատվածում հեղինակն անդրադառնում է թե՛ Բրյուսովի հայտնի դասախոսություններին, թե՛ երկու բանաստեղծների հանդիպումներին ու գրական գրույցներին, սակայն գրականագետն առանձնակի ուշադրության է արժանացնում այն, ինչ արտահայտված էր վերագրում: Ա. Զաքարյանը գրում է. «Իր ողջ գործունեության ընթացքում Թումանյանը հայ ժողովրդի գոյությունը պատկերացրել է Ռուսաստանի հովանու տակ խաղաղ զարգացման և ազգային ինքնորոշման իրավունքի առկայության պայմաններում» (էջ 21): Եվ նույն համատեքստում էլ մեջբերում է Բրյուսովի խոսքը Թումանյանի մասին՝ առթիվ գրված հոդվածից. «Թումանյանը «ռուսական օրինետաղիայի» համոզված կողմնակից էր» (էջ 33): Գեներալ, բանաստեղծ Ա. Կուլեբյակինի և Թումանյանի համատեղ թե՛ ազգային, թե՛ գրական գործունեությունը լուսաբանվում է «Ա. Կուլեբյակին. «Ներշնչվի՛ր. մարդկանց պետք է Թումանյան» բաժնում: Այստեղ նե-

միջև եղած հոգևոր կապը՝ հետազոտողը կանգ է առնում Թումանյանի և Գորոդեցկու փոխհարաբերություններում հայ բանաստեղծի ռուսական կողմնորոշման խնդրի վրա: Ընթերցելով աշխատության՝ «Բ. Լազարևսկի. «...Սերը մերձավորի հանդեպ ֆիկցիայից կդառնա իրականություն...» հատվածը՝ մեկ անգամ ևս համոզվում են, թե որքան ուշադիր է եղել Թումանյանը այլազգի այն բոլոր մտավորականների, մասնավորապես գրողների նկատմամբ, ովքեր թեկուզ շատ կարճ ժամանակով այցելել են Թիֆլիս, այլևայլ թեմաներով դասախոսություններ կարդացել և իբրև կանոն հյուրընկալվել բանաստեղծի տանը: Նրանց թվում է եղել արձակագիր Բորիս Լազարևսկին: Աշխատության մեջ քննության առնված Թումանյանի մասին ռուս գրողների տված բարձր գնահատականների, նրան ծոնված ռուս պոետների՝ Բալմոնտի, Բրյուսովի, Գորոդեցկու, Կուլեբյակինի բանաստեղծությունների, տարբեր առիթներով Թումանյանին ուղղված ընծայագրերի շնորհիվ հառնում է մեծ լռեցու մարդկային կերպարը և այն անսահման սերն ու հիացումը, որ տաժել են ռուս գրողները նրա ու նաև Հայաստանի նկատմամբ, քանի որ առաջինը հենց նրանց ստեղծագործություններում ու բնորոշումներում Թումանյանը նույնացավ Հայաստանի հետ, հենց նրանք աշխարհին ներկայացրին Թումանյանին իբրև մեր հայրենիքի խորհրդանիշ: Այս ամենը Ա. Զաքարյանը ներկայացնում է փաստական ամուր հիմքի վրա, հանգամանք, որը հեղինակի երկար տարիների գիտական պրպտումների արդյունքն է, հայ և ռուս գրողների գեղարվեստական երկերի, էպիստոլյար ժամերի, արխիվային նյութերի և գիտական գրականության հետազոտության արդյունք: **Սուսաննա ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
Բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը՝ բնապահպանական կրթության առաջնագծում

Արդեն մոտ մեկ տարի է, ինչ ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի (ԳԿՄԿ) բնապահպանության և բնօգտագործման ամբիոնը և ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնը համատեղ իրականացնում են «Շրջակա միջավայրի պաշտպանություն (բնապահպանություն) կրթական ծրագրերի արդիականացումը Հայաստանի և Վրաստանի համար» Երազմուս+ կարողությունների զարգացման ծրագիրը: Ծրագրի ընդհանուր նպատակն է շրջակա միջավայրի պաշտպանության (բնապահպանության) ոլորտում բարելավել կրթական ծրագրերի որակը Հայաստանում և Վրաստանում, ապահովել առարկայական ծրագրերի բազմակողմանի արդիականացումը: Ծրագիրը կարևորում է հետբուհական կրթության և գիտահետազոտական գործունեության սերտ կա-

պը՝ շրջանավարտներին զինելով նորագույն գիտելիքներով և գործնական հմտություններով: Բնապահպանական կրթությունը կտրուկ արդիականացնելու նպատակով ծրագրի շրջանակներում ստեղծվում է միջհամալսարանական կրթական և գիտահետազոտական եզակի լաբորատորիա ՀՀ ԳԱԱ Էկոլոգանոսֆերային հետազոտությունների կենտրոնի լաբորատորիայի վրա, որտեղ կիրականացվեն ուսանողական նախագծեր և արտաքին շահառուների հետ համագործակցային տարբեր նախագծեր: Ավելի՛ն՝ լաբորատորիան զինվում է ժամանակակից լաբորատորային ենթակառուցվածքներով և հնարավորություն է տալիս իրականացնելու տարբեր նախագծեր համալսարանների և արտաքին շահառուների միջև: Արդեն իսկ կնքվել է միկրոանալիզի համակար-

գով ռաստրային էլեկտրոնային մանրադիտակի (ՌԷՄ) մատակարարման պայմանագիրը, որի ձեռքբերումը հնարավորություն կընձեռի իրականացնել նորարարական գործառնություն՝ օպտիկական արտապատկերումից դեպի ՌԷՄ արտապատկերում և ՌԷՄ դիտման ընթացքում վերականգնված կենդանի 3D պատկերների ցուցադրում: Ուսումնական այցեր են կատարվել գործընկեր եվրոպական համալսարաններ՝ Տուշայի համալսարան (Իտալիա), Լիսաբոնի տեխնիկական համալսարան (Պորտուգալիա), Մարտին Լյուբեքի համալսարանի Երկրաբանական գիտությունների և աշխարհագրության ինստիտուտ (Գերմանիա), որտեղ ուսումնասիրվել են համապատասխան առարկայական ծրագրերը և նկարագրերը, գիտության և կրթության մերձեցման հաջողված փորձը, ինչպես նաև հետազո-

տահեն կրթության իրականացման մոդելները և կառուցակարգերը: Միջազգային ուսումնասիրության հիման վրա ԳԿՄԿ բնապահպանության և բնօգտագործման ամբիոնի պրոֆեսորադասախոսական կազմը կատարել է դասավանդող և դասավանդվելիք դասընթացների համեմատական վերլուծություն՝ տվյալ դասընթացները եվրոպական լավագույն փորձին առավելագույնս մոտեցնելու միտումով: Ծրագրի շրջանակներում կատարվել է բնապահպանական կրթության SWOT վերլուծություն, որի նպատակն է վերհանել Հայաստանում բնապահպանական կրթության պահանջարկը, բացել, արտաքին շահեկիցներին, բնապահպանական կրթության առավելությունները և թերությունները: Դասընթացները մշակվելու և արդիականացվելու են թե՛ հայերեն, թե՛ անգլերեն լեզուներով և դասավանդվելու են արդեն իսկ 2019-2020 ուսումնական տարում՝ նպատակով բնապահպանական կրթության միջազգայնացմանը և ինտեգրմանը բարձրագույն եվրոպական կրթական տարածք:

ՄԵԾԱՐՈՒՄ

Պրոֆեսոր Նորայր Բեյլերյանի հոբելյանը

Ս.թ. հուլիսի 15-ին մարդաշատ էր 33 ԳԱԱ օրգանական և դե-
ղագործական քիմիայի գիտակենսատեխնոլոգիական կենտրոնի
դահլիճը...



Ս.թ. հուլիսի 15-ին մարդաշատ էր 33 ԳԱԱ օրգանական և դե-
ղագործական քիմիայի գիտակենսատեխնոլոգիական կենտրոնի
դահլիճը...

Պրոֆեսոր Ն. Բեյլերյանի կենսագրությանը և գիտամանկավար-
ժական գործունեությանը ավելի հանգամանակից անդրադարձավ
Բ.Գ.Գ., պրոֆեսոր Ռ. Զարուբյանյանը:

Ն. Բեյլերյանը ծնվել է 1929 թ. հուլիսի 14-ին Կահիրեում՝ մտա-
վորականի ընտանիքում: 1947 թ.-ին ավարտել է Գալուստյան ազ-
գային վարժարանը և ընտանիքով տեղափոխվել Մայր Զայրեմիք
ու բնակություն հաստատել Երևանում: 1948 թ.-ին ընդունվել է ԵՊՀ
քիմիայի ֆակուլտետը և 1953 զերագանցությամբ ավարտելով, աշ-
խատանքի է ընդունվել ֆիզիկական և կոլորիդների քիմիայի ամ-
բիոնում՝ պրոֆեսոր Զ. Չալտիկյանի ղեկավարությամբ: 1969 թ.-ին
պաշտպանել է թեկնածուական, իսկ 1974 թ.-ին՝ դոկտորական ա-
տենախոսություններ, որոնք ծանրակշիռ և լուրջ խոսք էին պերօ-
սիդների, ամինների և ռադիկալային ռեակցիաների քիմիաների
բնագավառներում: 1976 թ.-ից մինչև 2000 թ. եղել է ֆիզիկական
և կոլորիդների քիմիայի ամբիոնի վարիչը և ամբիոնից կից պրոբ-
լեմային լաբորատորիայի գիտական ղեկավարը: 2001 թ.-ին նրան
շնորհվել է «ամբիոնի պատվավոր վարիչ» կոչումը: 2000-2005 թթ.
եղել է պրոբլեմային լաբորատորիայի գիտական ղեկավար, իսկ
2008-2011 թթ.՝ գիտական թեմայի ղեկավար: 2011 թ.-ին 82-ամյա
վաստակաշատ պրոֆեսոր Ն. Բեյլերյանը ազատվել է ԵՊՀ-ից:

Իր կետարյա գիտական գործունեության ընթացքում պրոֆե-
սոր Ն. Բեյլերյանի ղեկավարությամբ 52 անձ պաշտպանել է թեկ-
նածուական, իսկ 6 անձ՝ դոկտորական ատենախոսություններ,
հանրապետական և միջազգային գիտական հանդեսներում
տպագրվել են 700-ից ավելի աշխատություններ: Սրանք սոսկ թվեր
չեն, այլ նրա գիտական վաստակի արտահայտություններն են:

Պրոֆեսոր Բեյլերյանը եղել է ակտիվ քաղաքացի և իր ելույթ-
ներում ու հատկապես տարբեր թերթերում և հանդեսներում
տպագրված հոդվածներում, արձագանքել է, ինչպես ասում են, օր-
վա խնդիրներին: Վերջին հոդվածը (երևի թե այն վերջինը չի լի-
նելու) «Նորից ու նորից մեր մայրենիի անաղարտության պահպան-
ման մասին» վերնագրով լույս է տեսել «Հասկ» հանդեսում 2019
թ.-ին (հունվար-փետրվար):

Միջոցառման վերջում տեղի ունեցավ պրոֆեսոր Նորայր Բեյ-
լերյանի կենսագրությանը, գիտական ու հասարակական գործու-
նեությանը նվիրված «Չետադարձ հայացք 90-ամյա շեմից» գրքի
(հեղինակ՝ պրոֆեսոր Ռ. Զարուբյանյան) շնորհանդեսը:

Ռ. ԶԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հուլիսի 4-5-ին Ղազախստանի մայրաքաղաք Նուրսուլթանում տեղի ունեցավ Եվրասիական
Միության մայրաքաղաքների գրողների, գրականագետների առաջին միջազգային ֆորումը,
որին Հայաստանից հրավիրված էր ՀԳՄ անդամ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ալեխտա
Դուլխանյանը: Նրա զեկուցումը կոչվում էր «Արդի հայ գրականության հիմնական
միտումները և համընդհանուր գրականությունը»: Գիտաժողովին մասնակցում էին 20
երկրների գրողներ և գրականագետներ, թարգմանիչներ: Նրանք եկել էին Ռուսաստանի
Դաշնությունից, Ուկրաինայից, Իսպանիայից, Եգիպտոսից, Հնդկաստանից, Արաբական
Միացյալ Էմիրություններից, Թուրքիայից, Իսրայելից, Մոնղոլիայից և այլ երկրներից:
Ֆորումի մասնակիցներին ողջունեցին Նուրսուլթանի քաղաքապետը, Ղազախստանի
սպորտի, երիտասարդության և մշակույթի նախարարը: Նշանավոր ղազախ գրող Օլժաս
Սուլեյմանովն իր ողջույնի խոսքում նշեց. «Առանց գրականության չկա տնտեսություն,
քաղաքականություն և մշակույթ»: Ֆորումի մասնակիցները երան Եվրասիական
համալսարանում, Խորհրդային Միության բուհադատված պաշտոնյաների կանանց «Ալֆիր»
ձամբարում, որտեղ տառապել են նաև շատ հայուհիներ: Ֆորումի մասնակիցները այցելեցին
նաև մշակույթային այլ վայրեր: Ներկայացնում ենք Ալեխտա Դուլխանյանի զեկուցման հայերեն
տարբերակը:

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԸՆԴՈՒՄՆԵՐԸ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ



Գրականության դերը համայն մարդկության
կյանքում գիտակցվել է դեռ հնագույն ժամանակ-
ներում: Դենց դրա համար էլ, երբ դեռ չկար գրա-
վոր գրականությունը, ստեղծվեցին առասպելները
և էպոսները: Բոլոր ժողովուրդներն ունեն իրենց է-
պոսները. դրանք ամեն մի ժողովրդի իղծերի ու
ցանկությունների խտացումն են: Այդպիսիք են Զո-
մերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը», Ֆիրդուսու
«Շահ-Նամեն», իսպանացիների «Սիդը», միդեռ-
լանդացիների «Տիլ Ուլենշպիգելը», ռուսական բի-
լինաները, հայկական «Սասունցի Դավիթը», ղա-
զախական «Այսադյաթ»-ը: Վերջինս ղազախական
հնագույն էպոսն է, և գլխավոր հերոսը՝ Այսադյաթը
վաստակել էր արդար առաջնորդի համբավ, ու
ղազախական տոները սկսվում էին նրան փառա-
վորող երգերով:

Թարգմանությունների կարևորությունը իմ նախ-
նիները զգացել են դեռևս V դարում՝ հայոց այբու-
բենի (405 թ.) ստեղծումից հետո: Մեր մտավորա-
կանները հենց V դարում հայ ազգին ծանոթացրին
համաշխարհային գրականությանն ու գիտությանը:
Եվ կատարեցին թարգմանություններ հին հունարե-
նից, ասորերենից, պարսկերենից, եբրայերենից:
Այդ թարգմանությունների մի մասը իրենց բնագրա-
յին լեզուներով կորել են, և այսօր գիտական աշ-
խարհին հայտնի են միայն հին հայերենով: Այդ գոր-
ծերից են Փիլոն Ալեքսանդրացու երկերի մեծ մա-
սը, Եվսեբիոս Կեսարացու պատմագիտական մեծ
արժեք ունեցող «Ժամանակագրությունը», Զերմես
Եռամեծի մի քանի գործերը և այլն:

Նուրսուլթանի գրողների միության հրավերն
ինձ հուզեց, որովհետև հենց այս տարի ապրիլին
Հայաստանի գրողների միության նախագահը՝ Էդ-
վարդ Միլիտոնյանը, կազմակերպել էր հայ դասա-
կան բանաստեղծների ղազախերենով լույս տեսած
անթոլոգիայի շնորհանդեսը: Հայ քնարերգությունն
այնտեղ ներկայացված էր Գրիգոր Նարեկացուց (X
դար) մինչև Պարույր Սևակ (XX դար): Ցավոք չեմ
տիրապետում ղազախերենին, որպեսզի կարողան
այդ անթոլոգիայի նախաբանները, սակայն հաճույ-
քով կարդացի անթոլոգիայի ռուսերեն վերջաբան-
ները, որոնք գրել էին պոետներ Բաուրիժան Բաբա-
ժանովին, Բաուրիժան Կուրմանկուլովը, գրակա-
նագետ Բեկարիս Բեգիմբայևը: Կուրմանկուլովը
գրում է. «XIX դարում երևան եկավ բանաստեղծ-

ների մի մեծ խումբ, որը հասցրեց հայ պոեզիան նոր
բարձունքի: Դրանք էին՝ Զովհաննես Թումանյանը,
Դանիել Վարուժանը, Վահան Տերյանը, Եղիշե Չա-
րենցը: Նրանք իրենց ստեղծագործական ուղին
սկսել էին XIX դարում, սակայն բանաստեղծական
արվեստի բարձունքին հասան քսաներորդում և հի-
շեցնում են մեր մեծ բանաստեղծներ և գրողներ Իլ-
յաս ժամնուգուրովին, Սակեն Սեյֆուլիմին, Բեիմբեթ
Մայլիմին, որոնց ստեղծագործական որոնումները,
ճակատագրերը ցավալիորեն նման էին ու համա-
հունջ:

Ալմաթիում ղազախերենով տպագրվել է Էդվարդ
Միլիտոնյանի «Воздушный дом» մանկական հիա-
նալի ժողովածուն, որը ԱՊՀ երկրների «Գրքար-
վեստ» մրցանակաբաշխության ժամանակ ստացել
է երկրորդ մրցանակը:

Հայ գրողները թարգմանվում են աշխարհի շատ
լեզուներով՝ իհարկե Եվրասիական Միության գրա-
կանության մեջ ամենից մեծ տեղ զբաղեցնում են
ռուսերեն թարգմանությունները: Ռուս գրականու-
թյան մասնագետ, պրոֆեսոր Միխայիլ Ամիրխանյա-
նը արդեն 14 անգամ կազմակերպել է (2009-2018)
միջազգային գիտաժողովներ, որոնք կոչվում են
«Русские классики: русская и национальные
литературы» (Ռուս դասականների՝ ռուս և ազգա-
յին գրականությունները): Այդ գիտաժողովների նյու-
թերը լույս են տեսել առանձին գրքերով: Այս տարի
աշնանը նման գիտաժողով կնվիրվի Աճնա Ախմա-
տովային: Այդ գիտաժողովներից ինձի ժամանակ ես
հանդես եմ եկել զեկուցումներով: Գիտաժողովները
նվիրված են եղել Ն. Գոգոլին, Ա. Չեխովին, Լ. Տոլս-
տոյին, Յու. Լերմոնտովին, Ա. Պուշկինին, Մ.
Սալտիկով-Շչեդրինին, Վ. Կարամզինին, Մ. Բուլգա-
կովին, Ա. Սոլժենիցինին և ուրիշների: Գիտաժողով-
ներից գրականագետները, այդ թվում նաև Ղազախս-
տանից: Հայաստանում Սերբիայի պատվո հյուպա-
տոս Բաբկեն Սիմոնյանը, որը փայլուն տիրապե-
տում է սերբերենին, արդեն երկար տարիներ սեր-
բական գրականությունը թարգմանում է հայերեն
և հայկականը՝ սերբերեն: Նա այդ հարցում հետևորդն
է մեր մեծերի՝ Ավետիք Իսահակյանի ու Զովհաննես
Թումանյանի:

Շատերն են թարգմանում ժամանակակից
հայ գրողներին տարբեր լեզուներով: Ժամանա- >6

Ստեփան Պապիկյանի գիրքը միջազգային ցուցահանդեսում



2019 թվականի հուլիսի 17-23-ը Հոնկոնգում տեղի ունեցավ գրքի միջազգային ցուցահանդես, որին մասնակցում էին աշխարհի տարբեր երկրներ: Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, բազմաթիվ ակադեմիաների իսկական անդամ, գրող, խմբագիր, հասարակական գործիչ Ստեփան Պապիկյանի «Հայաստանի էներգետիկայի պատմությունը» չորս հատորանոց մենագրության ռուսերեն և անգլերեն լեզուներով անոտացիաները ներկայացվեց այդ հեղինակավոր գրքի միջազգային ցուցահանդեսի ժամանակ և մեծ արձաքանք ունեցավ: Այն տպագրվել է «HONG KONG BOOK FAIR 2019» հեղինակավոր կատալոգում: Ուրախալի է, որ Հայաստանը ունեցավ էներգետիկայի պատմության չորս հատորյակ, և այն ներկայացվում է միջազգային բարձր մակարդակով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԱՐՑԱՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի և Արցախի համարապետությունների գազամատակարարման հարցերը կարելի էր նշանակալից և ունեն տնտեսության հետագա զարգացման համար: Էներգետիկայի բնագավառի անվանի գիտնական, Հայկական էներգետիկական ակադեմիայի հիմնադիր նախագահ, տեխնիկական գիտությունների թեկնածու, հասարակական գործիչ Ստեփան Պապիկյանը վերջերս որպես գիտական աշխատանք ավանդադրել է «Հայաստանի գազամատակարարման պատմությունը» մենագրությունը:

Հարկ է նշել, որ Ստեփան Պապիկյանը թերթի ստեղծման օրվանից հրապարակախոսական հոդվածներով հաճախ է հանդես եկել «Գիտություն» թերթում: Աշխատանքն ունի հանրագիտարանային բնույթ: Հավաքվել և ուսումնասիրվել են բազմաթիվ աղբյուրներ: Կարող է օգտակար լինել էներգետիկայի բնագավառում աշխատող մասնագետների, պատմաբանների և գիտնականների համար:

Աշխատանքում վերլուծված է Հայաստանի և Արցախի վառելիքաէներգետիկ համակարգի խնդիրները սկզբնավորումից մինչև մեր օրերը: Բերված են հարուստ տեղեկատվական տվյալներ և վերլուծություններ կապված Հայաստանի գազամատակարարման զարգացման խնդիրների հետ: Աշխատանքում բերված են պատմական տվյալներ Հայաստանի և Արցախի գազի տնտեսությունների արդի վիճակի և զարգացման հեռանկարների



մասին: Ներկայացնում ենք որոշ հատվածներ այդ մենագրությունից:

Անցած տարիների ընթացքում գազամատակարարման խնդիրները ունեցել են բազմաթիվ դժվարություններ պայմանավորված 90-ականների շրջափակումների, պատերազմական իրավիճակի և այլ հարցերի հետ: Այդ ժամանակահատվածում բնական գազը տրվում էր բնակչությանը ընդհատումներով: Հայաստանը չունենալով սեփական վառելիքաէներգետիկ ռեսուրսներ, այն ներմուծել է դրսից՝ հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ և խուճեր: Այս աշխատանքում փորձ ենք անում զննահատել մեր անցած ուղին և նշել ձեռքբերումները: Գազամատակարարման բնագավառում հիմնականում աշխատում են մեր հանրապետության ուսումնական հաստատություններն ավարտած մասնագետները: Ներկայումս Հայաստանի մի շարք բնակավայրերում բնակչությունը դեռևս բնական գազից չի օգտվում: Ամհրաժեշտ է մտածել այս մասին և լուծել այս խնդիրը, - գրում է հեղինակը:

Աշխատությունը հեղինակի երկար տարիների հետևողական գիտական աշխատանքի արդյունքն է: Այն մեծ ներդրում է գիտության այս բնագավառում: Առաջիկայում աշխատանքն ավելի ընդգրկում և բարեփոխված տարբերակով կներկայացվի հանրությանը: Ուրախալի է, որ ունենք այսպիսի հրաշալի աշխատանք:



Great-Granddaughter Wants to Give Diana Aparcar Her Due

By Alin K. Gregorian
Mirror/Spectator Staff

SAN FRANCISCO – For many of us, delving into history is interesting, but when that history involves a family member, it is that much more intimate as well as intimidating. Mimi Malayan, the great-granddaughter of Diana Aparcar, has made a film about her famous relative, which she hopes will restore her rightful place in history as a faithful servant of the Armenian people as well as a trailblazing diplomat. Malayan's documentary, "The Stateless Diplomat: Diana Aparcar's Life," brings attention to the countless selfless gestures of Aparcar during her fascinating lifetime which coincided with many historic events, including the Armenian Genocide, World War I, the Bolshevik revolution in Russia and the creation of an independent Armenia. Connecting with her great-grandmother's legacy humbled Malayan. The filmmaker said she had not realized the full range of her great-grandmother's efforts to help refugees of the Armenian Genocide.

see APCAR, page 14

ԱՐԳԱՐԻ ԾՈՒՆՈՒՇԻՆ ԱՐԺԱՆԻՆ Է ՄԱՏՈՒՑՈՒՄ ՆՐԱՆ

«Ազգ»-ի մայիսի 17-ի համարում տեղեկացրել էինք, որ Ուոթերթաունի հայկական թանգարանում տեղի է ունեցել Յոկոհամայուն (Ճապոնիա) բախտակիցներ դարձած երկու հայուհիների՝ դիվանագետ Դայանա Արգարի (1859-1937) և Գևորգյանի Դեթոնիի Քախյանի (1914-2014) անցած ուղու մասին պատմող ցուցահանդեսի բացումը:

Այժմ «Միրոր-Սփեքթեյթ» շաբաթաթերթը տեղեկացնում է, որ Դայանա (Գայանե) Արգարի ծոռնուհին՝ Միմի Մալայանը վավերագրական ֆիլմ է պատրաստել իր հեղինակավոր ազգականուհու մասին՝ հույս ունենալով իր ծառայությունների համար արժանի մատուցել նրան: «The Stateless Diplomat: Diana Aparcar's Life» (Պետականագուրկ դիվանագետը: Դայանա Արգարի կյանքը) ֆիլմը հանդիսատեսին է ներկայացնում հավանաբար առաջին կին դիվանագետի անցած ուսանելի ճակատագիրը, օգտագործելով ճապոնական ոճի գծանկարներ՝ գրիչով ու թանաքով արված թվային դիզայներ Լու Կեյի կողմից: Միմիի խոստովանությանը դժվար է եղել ամբողջական ներկայացնել նրա մարդասիրական կերպարը, բավականաչափ նյութերի բացակայության պատճառով: Բարեբախտաբար Արգարը կանոնավոր մամուլագրություն է պահպանել Ստանֆորդի համալսարանի հիմնադիր-նախագահ Դեյվիդ Սթար Ջորդանի հետ: Նամակները պահպանվել են Ստանֆորդի արխիվներում: Դրանցից բացի, որոշ փաստաթղթեր գտնվել են նաև Ամերիկյան կարմիր խաչի և ՄԱԿ-ի ժնուհ գործող գրասենյակներում:

Ըստ Ալին Գրիգորյանի («Միրոր») խմբագիր ֆիլմն սկսվում է ճոր ալիքացած Դայանի այն դրվագով, երբ մի կողմից ծնունդ է տալիս իր վեցերորդ զավակին, իսկ մյուս կողմից պարտատերերը կահույք են տանում իր տնից: Այս անեմին գումարած նա պարտավոր էր վերականգնել իր ամուսնու անհաջող բիզնեսը, որպեսզի կարողանար ապահովել ընտանիքի գոյատևումը: Հոգսերը բազմազան էին, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նա չէր կարող անտարբեր մնալ Ադամայի ջարդերի հետևանքով անտեր մնացած հայ ընտանիքների ճակատագրի նկատմամբ:

Ֆիլմում, բացի փաստաթղթերից ու մամուլներից, կան հարցազրույցներ որոշ դիվանագետների և պատմաբանների հետ, ինչպես, օրինակ, Առլինգտոնի (Մասաչուսեթս) Հայկական մշակութային հիմնադրամից դոկտ. Արա Ղազարյանի, Ճապոնիայում Հայաստանի դեսպան Հրանդ Պողոսյանի և պրոֆ. Քիթ Ուոտենայտի հետ: Ճապոնիայի Տոհոկու համալսարանում դասավանդող Մելինե Մեարոյանը մեծապես նպաստել է ֆիլմի պատրաստմանը: Մելինեն թեզ է պաշտպանել Արգարի մասին և շուտով գիրք կհրատարակի ճապոներենով:

Միմի Մալայանը ծնվել է Սան Ֆրանցիսկոյում, բայց հոր աշխատանքի պատճառով (հայրը եղել է ՀԷԿ-եր նախագծող), հասակ է առել Ճանապարհորդելով տարբեր երկրներում՝ Հոլանդիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ասիական և հարավամերիկյան երկրներում: Հաճախել է Ջորջ Վաշինգտոն համալսարանը նախքան ամուսնանալը, հետո ապրել Չիկագոյում, Դետրոյթում, Ատլանտիկ Սիթիում և Ատլանտայում: 1983-ից դարձյալ Սան Ֆրանցիսկոյում է ապրում: Մասնագիտությամբ ճարտարապետ է: 2012-ին որոշել է, որ լավագույն ձևը Արգարի մասին պատմելու վավերագրական ֆիլմ պատրաստելն է: Նրան այդ հարցում օգնել է ֆիլմարտադրիչ **Արթուր Մուրադյանը**:

Ֆիլմը, ըստ հոդվածագրի, անցյալ նույններին ցուցադրվել է Տորոնտոյի նույն կինոփառատոնի ընթացքում, ինչպես նաև այս տարվա ապրիլի 24-ին Սան Ֆրանցիսկոյի հանրային գրադարանում: Առաջիկա ցուցադրումը կայանալու է Փենսիլվանիայի «Նյու Հոփ» կինոփառատոնի օրերին: Կանադայում կայացած ցուցադրմանը ֆիլմը երկու մրցանակ է արժանացել՝ մեկը հանդիսատեսի ընտրության և մյուսը՝ պատվարժան հիշատակման համար:

ԱՐԴԻ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ...

➤5 կակից տաղանդավոր արձակագիր Նորայր Աղայանի գրքերը թարգմանվել են եվրոպական լեզուներով: Նա իր գրքերի շնորհանդեսներին մասնակցել է Սլովենիայում և Գերմանիայում:

Տաղանդավոր դրամատուրգ Կարինե Խողիկյանի (Հայաստանի գրողների միության «Գրական թերթի» գլխավոր խմբագիր) պիեսները տարբեր լեզուներով ոչ հայկական թատրոններում բեմադրվել են Լոս Անջելեսում, Ռուսիայում, Ֆրանսիայում, Տաիվանում, Ռուսիայում, Մոլդովայում, Լատվիայում, Վրաստանում, Իրանում, Ռուսաստանի Պերմ, Չայկովսկ, Սամարա, Ալյանկովսկ, Պետերբուրգ, Մոսկվա քաղաքներում: Սա նշանակում է, որ հայ դրամատուրգը իր պիեսներում բարձրացնում է համամարդկային խնդիրներ, որոնք հուզում են տարբեր լեզուներ ու կրոններ ունեցող մարդկանց:

Որոշ հայ թարգմանիչներ նախընտրում են պարբերաբար թարգմանել նույն տաղանդավոր գրողի հերթական վեպը: Լիա Իվանյանը, օրինակ, թարգմանել է ռուս տաղանդավոր գրող Յուրի Պոլյակովի բազմաթիվ վեպերը, որոնք ջերմորեն ընդունվել են հայ ընթերցողների կողմից:

Ժամանակակից հայ գրողներից Գուրգեն Խանջյանն իր «Տուր ձեռքը պատու» վեպում գործողությունները ծավալում է Եվրասիական երկրների տարածքում, և վեպի հերոսները հայեր չեն: Գլխավոր հերոսուհին Եկիմոսուհի էյյան է, որի կերպարն անմոռաց է: Հեղինակի այդ վեպն արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի:

Շատ տաղանդավոր գրողներ կան աշխարհում, որոնք ստեղծագործում են իրենց ազգային լեզուներով: Հիմա՝ քսանմեկերորդ դարում, երբ տեխնոլոգիական առաջընթացն ավելի է մոտեցրել աշխարհի տարբեր ազգերին, հանկարծ գիտակցում են, թե Հին Կտակարանի «Ժողովուրդի» իմաստությունը չի հնացել, և այսօր էլ կարևոր է մեր հանձարեղ Գրիգոր Նարեկացու երազանքը՝ մարդուն տեսնել բոլոր մեղքերից մաքրված և չարիքից հեռու, ու այդ երազանքը բոլոր ազգերի համար է: Նման համաժողովները մերձեցնում են տարբեր ազգերին, հնարավորություն ստեղծում սովորել մեկը մյուսից, հետևել կատարյալին և միասնական գնալ մարդկային ընդհանուր մտավոր ժառանգության կերտմանը:

Ահա այս առումով Ղազարյանի Նուրսուլթան մայրաքաղաքի գրողների համաժողովը իրականացնում է գրական ու պատմական մեծ առաքելություն:

Որպես Հայաստանի գրողների միության անդամ հավաստիացնում են, որ դարավոր ավանդույթներ ունեցող հայ գրականությունը այսօր պահպանում է իր մեծ հետաքրքրությունը դեպի բոլոր ազգերի գրականությունները՝ համամարդկային գրական երևույթներին մշտապես հաղորդակից լինելու իր տևական մղումով:



ժը՝ մարդուն տեսնել բոլոր մեղքերից մաքրված և չարիքից հեռու, ու այդ երազանքը բոլոր ազգերի համար է: Նման համաժողովները մերձեցնում են տարբեր ազգերին, հնարավորություն ստեղծում սովորել մեկը մյուսից, հետևել կատարյալին և միասնական գնալ մարդկային ընդհանուր մտավոր ժառանգության կերտմանը:

Ահա այս առումով Ղազարյանի Նուրսուլթան մայրաքաղաքի գրողների համաժողովը իրականացնում է գրական ու պատմական մեծ առաքելություն:

Որպես Հայաստանի գրողների միության անդամ հավաստիացնում են, որ դարավոր ավանդույթներ ունեցող հայ գրականությունը այսօր պահպանում է իր մեծ հետաքրքրությունը դեպի բոլոր ազգերի գրականությունները՝ համամարդկային գրական երևույթներին մշտապես հաղորդակից լինելու իր տևական մղումով:

ԼԵՎՈՆ ԱՆ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՅԻ ԹԱԳՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Ութ հարյուր տարի առաջ վախճանվեց հայոց պատմության և մշակույթի բնագավառներում անջնջելի հետք թողած (այլ պետությունների հետ հարաբերությունների զարգացման առումով) Կիլիկիայի թագավոր Լևոն Ա-ն, որ երրորդ խաչակրաց արշավանքի ժամանակ

ցուցաբերած աջակցության համար թագ էր ստացել Ֆրիդրիխի հաջորդից՝ գերմանացի կայսր Յենրի Դ-ից: Նա թագադրվել էր 1199-ի հունվարի 6-ին Տարսուսի Սայր տաճարում՝ Ռուբինյան, Յեթումյան տոհմերի և խաչակրաց ազնվականների ներկայությամբ: Գերմանական Յալլե

քաղաքը մայիսի 17-ին և 18-ին մշեց այս տարեկիցը մի շարք համդիսություններով, որոնց մաս էր կազմում նաև Գերմանիայի և Յայաստանի միջև մշակութային համաձայնության ստորագրման 20-ամյակը: Նախ բացվեց ցուցահանդես Մորից-բուրգ պետական թանգարանում, որը շարունակվելու է բաց մնալ մինչև հուլիսի 29-ը, և հաջորդ օրը կազմակերպվեց միջազգային գիտական խորհրդակցություն Մարտին Լութեր համալսարանում», «Միորո-Սփեքթեր» շաբաթաթերթում տեղեկացնում է Մուրիել Միրաք-Վայսբախը:

Խորհրդակցությանը մասնակցել են ականավոր գիտնականներ Յայաստանից, Միացյալ Նահանգներից և Ֆրանսիայից: Ողջույնի խոսքերով հանդես են եկել Լեոպոլդինայի գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ պրոֆ. Գունար Բերգը, Արևելյան ուսումնասիրությունների ինստիտուտի պրոֆ. Կոնստանտին Զոնդը և Յայաստանի դեսպան Աշոտ Սմբատյանը: Ուղերձ է հղել նաև Սեծի Տանն Կիլիկիայի կաթողիկոս Արամ Ա-ն:



Internationale wissenschaftliche Tagung

Das armenische Königreich am Mittelmeer:
Kilikien im internationalen, kulturellen und politischen Kontext
(anlässlich des 800. Todesjahres Levons I.)



ԹԵՂԵՐՅԱՆԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՏԱՎԱԿԱՆ ԲԵՄՈՒՄ

Հուլիսի 5-ին Իտալիայի Սան Զիմինիան քաղաքի «Փակ այգու թատերախումբը» Պեկորի հրապարակում ներկայացրել է «Դատապարտյալը մեղավոր չէ» ներկայացումը՝ ազատորեն ներշնչված Մորդոն Թեյլերյանի դատավարությունից: Թատերախումբը գրել է Տուչո Գուլիչարդինին, բեմադրել է ինքը՝ կնոջ՝ Պատրիցիա դե Բարիի հետ միասին: Դերերը կատարել են վեստերան դերասան Բոբ Մարկեզեն (Պաոլո Մոնեմտինոյի «Իլ դիվո» ֆիլմի գլխավոր դերակատարը) և երիտասարդ դերասան Սեբաստիանո Ջերոնիմոն, ներկայացման մեջ հնչում են Աննիբալե Պավոնեի և Իգոր Չորվաթի ծայները, օգտագործված է նաև Անդրեա Մոնտանյանի կազմած տեսաշարը: Տուչո Գուլիչարդինի ծնվել է 1966-ին, տնօրինում է Սան Զիմինիանոյի «Փակ այգու թատերախումբը», որոշ կապեր ունի հայ թատերական գործիչների հետ:

ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԻԶՈՆՆԵՐ

Իլոն Մասքի ավտոմեքենան առաջին պտույտն է կատարել Արեգակի շուրջը.

Space X ընկերության հիմնադիր Իլոն Մասքի անձնական հավաքածուից Tesla Roadster ավտոմեքենան՝ ղեկին սկաֆանդր հագած Starman մանիկենը, որը տիեզերք էր դուրս բերվել 2018 թվականի փետրվարին, առաջին պտույտն է կատարել Արեգակի շուրջը:

Ինչպես հայտնել է Space.com պորտալը, հաշվարկների համաձայն, մեքենան, որի ղեկի առջև մանիկեն է, Արեգակի շուրջը լրիվ պտույտը կատարում և 557 օրվա ընթացքում: Այն արդեն հաղթահարել է 1,2 մլրդ կիլոմետր տարածություն: Մեկնարկի ժամանակ մեքենայի սրահում հնչել է Դեվիդ Բուրիի Life on Mars երգի ձայնագրությունը: Եթե Tesla-ի ուժակուտակիչը դեռ աշխատում է, ապա այդ ձայնագրությունը կրկնվել է ավելի քան 150 հազար անգամ:

Վկայակոչելով ուղեծրի՝ ամցյալ տարի անցկացված հաշվարկները՝ Space.com-ը նշել է, որ ղեկի առջև նստած մանիկենով ավտոմեքենան դեռ շատ պտույտներ կկատարի Արեգակի շուրջը, սակայն ի վերջո՝ մոտավորապես 1 մլն տարի անց, կմտնի կամ Վեներայի, կամ Երկրի մթնոլորտ և կդադարի գոյություն ունենալ: Շանսերը, որ նա Երկիր կվերադառնա, կազմում են 6 տոկոս, իսկ Վեներայի մթնոլորտ մտնելու հավանականությունը գնահատվում է 2,5 տոկոս, հաղորդել է SUSA-ը:



Դեպի Երկիր են սուրում միանգամից երկու մեծ աստղակերպեր

Սեպտեմբերի 14-ին միանգամից երկու մեծ աստղակերպեր կմոտենան Երկրին: Այդ մասին, հայտնել է NASA-ն:

Աստղակերպերից մեկի՝ 2000QW7-ի տրամագիծը կազմում է 290-ից մինչև 650 մետր, ինչը բարձր է Օստանկինոյի հեռուստաաշտարակից (540 մետր): ԱՄՆ-ի գործակալության տվյալներով՝ այն մոլորակին կմոտենա 5,3 միլիոն կիլոմետր հեռավորությամբ: Նույն օրը մոտավորապես նույն հեռավորությամբ Երկրին կմոտենա 2010CO1 աստղակերպը, որի տրամագիծը 120-ից մինչև 260 մետր է:

Ավելի վաղ տեղեկացվել է, որ օգոստոսի 28-ին մեկ միլիոն կիլոմետր հեռավորությամբ Երկրին կմոտենա 2019 OU1 աստղակերպը, հաղորդել է ՌԻՎ Նովոսոխին:



Արհեստական ուղեղն առաջին անգամ մտածել է

Սան Դիեգոյի Կալիֆոռնիայի համալսարանի գիտնականները ներդրման համար ստացել են արձանագրել իրենց կողմից արհեստականորեն աճեցված ուղեղում: Այդ մասին, ինչպես տեղեկանում ենք սաված է Stem Cell գիտական հոդվածում:

Հետազոտողների խոսքով՝ արհեստական ուղեղի համաժամ իմպուլսները նման են եղել վաղաժին երեխաների էլեկտրաէնցեֆալոգրամին:

Մարդու արհեստական օրգանն ստեղծվել է չափափայլ մարդու ցողունային բջիջներից: Գիտնականները կարողացել են դրանց հարկադրել վերածվելու գլխուղեղի կեղևի ոչ մեծ հատվածի:



Բրիտանացի գիտնականներն ստեղծել են Նոր տիպի համակարգչային հիշողություն՝ գերցածր էներգասպառմամբ

Լանքասթերի համալսարանի գիտնականներն ստեղծել ու պատենտավորել են համապիտանի համակարգչային հիշողություն, որն աշխատում է քվանտային մեխանիկայի սկզբունքներով և օժտված է ռեկորդային ցածր մակարդակի էներգասպառմամբ: Սպասվում է, որ հայտնագործությունը կարող է փոխարինելու գալ DRAM դինամիկ հիշողության ավանդական սարքերին, որոնք այսօրվա դրությամբ օգտագործվում են համակարգիչների և ֆլեշ-կուտակիչների մեծամասնության մեջ: Նոր սարքը զուգակցում է երկու տեխնոլոգիաների առավելությունները, ներառյալ տեղեկատվության զրանցման և ընթերցման մեծ արագությունը և դրա պահպանման հուսալիությունը: Դրա հետ մեկտեղ մշակողներին հաջողվել է լուծել ավանդական հիշասարքերի խնդիրները. համակարգչային հիշողության նոր տիպի համար տեղեկատվության պահպանման ժամանակը գերազանցում է Տիեզերքի տարիքը, իսկ տվյալների գրանցումն ու հեռացումը հարյուր անգամ պակաս էներգիա կախահանջի DRAM-ի նույն այդ գործընթացների ծախսերի համեմատությամբ: Տեխնոլոգիան կօգտագործվի ժամանակակից բոլոր գաջետներում՝ շարժական սարքերից ու անհատական համակարգիչներից մինչև սերվերներն ու «մեծ տվյալների» պահպանման համակարգերը: Գիտնականների գնահատումներով՝ նոր տիպի համակարգչային հիշողությունը թույլ է տալիս տվյալների մշակման կենտրոններում առավելագույն էներգասպառումը նվազեցնել առնվազն 20 տոկոսով, հաղորդել է SUSA-ը:



ԳԱՐՏՆԻՔ չէ, որ մեր մայրաքաղաքում վերջերս թափառող շները շատացել են, սրա մասին տարբեր առիթներով խոսվել է: Սակայն հիմա կամենում եմ շների հետ կապված մի այլ խնդրի մասին բարձրաձայնել՝ տերով շների և դրանց տերերի: Ինչպես գիտենք, շուն պահողները երբեմն իրենց շներին զբոսանքի են տանում. դա բնական է, տիրապետողը՝ կենդանի պահողը, կենդանու տերը, նույնիսկ օրենքով պարտավոր է ապահովել շարժման, բնական ակտիվության նկատմամբ կենդանու պահանջները:

Շների զբոսանքի առումով, սակայն, կա մի մեծ լի երևույթ. երբեմն որոշ շնատերեր իրենց խոշոր ցեղատեսակի շներին հանրային վայրեր են դուրս բերում առանց կապի: Ինչքան էլ ասեն «շունը մարդու բարեկամն է», այնուամենայնիվ, շունը կենդանի է, բանականությունից զուրկ արարած, և չկա ոչ մի երաշխիք, որ նա չի վնասի շրջապատի մարդկանց: Շների զբոսանքն իրականացնելու կանոնները սահմանված են երևան քաղաքի ավագանու 2011 թ. հոկտեմբերի 24-

Այստեղ հարկ եմ համարում մեջբերել որոշման 27-րդ կետը. «Շներ տիրապետողներն իրավունք ունեն դրանց ազատ արձակել միայն սեփականության, տիրապետման կամ օգտագործման ներքո գտնվող հատուկ առանձնացված տարածքներում կամ մեկուսացված շինություններում»: Իսկ ըստ 22-րդ կետի. «Կենդանիների զբոսանքը թույլատրվում է միայն այդ նպատակով հատուկ հատկացված տարածքներում: Նման տարածքների բացակայության դեպքում զբոսանքը կարող է իրականացվել ամայի կամ խոտածածկ տարածքներում, բացառությամբ կրթական, մշակութային, սպորտային, առողջապահական կազմակերպություններին (հիմնարկներին) հարող տարածքների, մանկական հրապարակների և շուկաների տարածքների: Հավելեմք նաև 31-րդ կետի 5-րդ ենթակետը, համաձայն որի՝ արգելվում է «շանը զբոսանքի տանելը մանկական հրապարակներում, առողջապահական, կրթական, մշակութային, սպորտի հիմնարկների և շուկաների տարածքներում»:

Շների, շնատերերի և Ծիծեռնակաբերդի զբոսայգու մասին

Ի՞ երևան քաղաքում ընտանի կենդանիներ պահելու և հաշվառելու կանոնները հաստատելու մասին N 312-Ն որոշմամբ: Ըստ վերջինիս 5-րդ կետի 10-րդ ենթակետի՝ տիրապետողը պարտավոր է «ապահովել յուրաքանչյուր անձի անվտանգությունը և անդորրը կենդանու ազդեցությունից, այդ թվում՝ առանց դնչկալի կամ վնասագերծման ապահովման»: Նույնն է պահանջում նաև 23-րդ կետը. «Շների զբոսանքն իրականացնելու ժամանակ տիրապետողը պետք է ապահովի շրջապատող անձանց անվտանգությունը»:



Տիրապետողի շների զբոսանքի հետ կապված պարտավորությունների մասին մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ մանրամասն խոսվում է 24-րդ կետում (Շների զբոսանքի ժամանակ տիրապետողը պարտավոր է՝ «1) շանը տարածքից դուրս բերել կամ ներս տանել կապով, որի երկարությունը թույլ է տալիս հսկել շան վարքը: Մարդկանց և ուրիշ կենդանիներին սպառնացող շները (մարտական, ծառայողական, պարեկային և այլ ցեղատեսակի շներ, որոնք կարող են լինել ագրեսիվ և վտանգավոր մարդու կամ այլ կենդանու կյանքի կամ առողջության համար, այսուհետ՝ ագրեսիվ շուն) պետք է ունենան դնչկալներ: Ագրեսիվ շների ցանկը սահմանում է երևանի քաղաքապետը,

Ասեմ, որ Ծիծեռնակաբերդի զբոսայգում կա շների զբոսանքն արգելող ցուցանակ, որը, ինչպես տեսնում ենք, արհամարհված է: Ցավով պիտի նշեն, որ շներին առանց կապերի զբոսանքի տանելու դեպքեր կան նաև Կոմիտասի զբոսայգում, ամենևին չի բացառվում, որ երևանյան այլ զբոսայգիներում ու պուրակներում ևս այս երևույթը լինի:

Նկատի ունենանք, որ իրենց տերերի հետ ազատ զբոսնող շների կարող են հանդիպել նաև երեխաներ և այնպիսի մարդիկ, որոնց ամենաբարի շունն անգամ վախեցնում է, իսկ շները, և ոչ միայն դրանք, ինչպես գիտենք, վախն զգում են:

Իհարկե, շների զբոսանքն իրականացնելու կանոնները խախտելը պատժվում է օրենքով: Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելը կարգավորվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 113-րդ հոդվածով, որը սահմանում է. «1. Քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու կանոնները խախտելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկից մինչև տասնապատիկի չափով: 2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքները, որոնց հետևանքով վնաս է պատճառվել իրավաբանական կամ ֆիզիկական անձանց գույքին, ինչպես նաև ֆիզիկական անձանց առողջությանը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանապատիկից մինչև հիսնապատիկի չափով»:

3) առանց դնչկալի և կապի շանը զբոսանքի տանելու առանձնացված վայրերը սահմանվում են երևանի քաղաքապետի կողմից»:

Կապերով երբեմն բռնում են, դնչկալի մասին, սակայն, խոսք անգամ լինել չի կարող:

Շաբաթներ առաջ Ծիծեռնակաբերդի զբոսայգում ականատես եղա շնասերների չորսհոգանոց մի խմբի, որը դանդաղաբայլ ճեմում էր ութ խոշոր ցեղատեսակի առանց կապերի և, իհարկե, առանց դնչկալների շների հետ՝ զբաղեցնելով Հայոց ցեղասպանության հուշահամալիր և թանգարան-ինստիտուտ տանող ողջ ճանապարհը: Այդօրինակ զբոսանքների հետևանքով թանգարան-ինստիտուտի մի շարք աշխատակիցներ դժվարությամբ են հասնում աշխատավայր, այդ զբոսանքները անհարմարություն են պատճառում նաև անցորդներին: Նշված երևույթն ավելի ամոթալի կլինի, ավելի կմեծանա դրա բացասական բնույթը, երբ դրան բախվեն Հայոց ցեղասպանության հուշահամալիր և թանգարան-ինստիտուտ այցելող օտարերկրացիներ, զբոսաշրջիկներ. ի՞նչ կմտածեն նրանք մեր մասին, չե՞ն ասի արդյոք. «Հայերն այսպե՞ս են պահպանում իրենց մեծագույն ողբերգությանը նվիրված հուշահամալիրն ու թանգարան-ինստիտուտը»:

Լուսնի յուրացման ամերիկյան նախագիծը բաց կլինի բոլոր միջազգային գործընկերների համար. NASA

Լուսնի յուրացման ամերիկյան նախագիծը բաց կլինի բոլոր միջազգային գործընկերների համար: Լուսնի յուրացման ամերիկյան նախագիծը կներառի ոչ միայն Gateway լուսնաշուրջ կայանը, այլև մի ամբողջ ենթակառուցվածք, որը երկիրը կկապի իր բնական արբանյակի հետ, և այդ նախագիծն մասնակցությունը բաց կլինի բոլոր շահագրգռված միջազգային գործընկերների համար: Ինչպես տեղեկացվում է, փետրվարի 14-ին այս մասին հայտարարել է ԱՄՆ-ի Օդաչունցության և տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչության (NASA) տնօրեն Ջիմ Բրայդենսթայնը՝ Վաշինգտոնում՝ NASA-ի կենտրոնականայնում կայացած կլոր սեղանի ժամանակ, որը նվիրված էր Լուսնի հետազոտության ծրագրին:



«Մեր միջազգային գործընկերներից ոմանք որոշել են, թե Gateway-ը հիշեցնում է Միջազգային տիեզերակայանը, և նրանք բոլորը մրցում են, որպեսզի ստանան այդ մեկ տարրի, որը կոչվում է Gateway, մի մասը», - պարզաբանել է Բրայդենսթայնը: «Իրականում դա այն չէ, ինչ մենք պատկերացնում ենք երկարաժամկետ հեռանկարում, մենք նախատեսում ենք մի ամբողջ ենթակառուցվածքի ստեղծում (...), այդ ամբողջ ենթակառուցվածքը բաց և մատչելի կլինի միջազգային գործընկերների մասնակցության համար, և դա մեզ բոլորիս թույլ կտա անել ավելին, քան երբևէ», - հայտարարել է NASA-ի ղեկավարը: «Մենք այժմ խոսում ենք շատ լայն և բաց ենթակառուցվածքի մասին, որը կներառի երկրի և Լուսնի միջև բոլոր կապող տարրերը և նույնիսկ բնակելի մոդուլներ Լուսնի մակերևույթին», - հավելել է նա, հաղորդել է SUSA-ը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի *արդի հայերենի բաժնի վարիչի և ընդհանուր ու համեմատական լեզվաբանության բաժնի ավագ գիտաշխատողի* թափուր տեղերի համար:

Դիմողները պետք է ունենան գիտական աստիճան, տվյալ ոլորտում գիտական վաստակ, գիտակազմակերպչական աշխատանքի փորձ:

Ամիրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) դիմում,
 - բ) լուսանկար,
 - գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
 - դ) ինքնակենսագրություն,
 - ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճեն,
 - զ) գիտական աստիճանը հաստատող դիպլոմի (դիպլոմների) պատճեն,
 - է) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
 - ը) տեղեկանք մշտական բնակության վայրից,
 - թ) հրատարակված աշխատանքների ցանկ,
 - ժ) գիտական կոչումը հաստատող փաստաթուղթ (դրա առկայության դեպքում),
 - ժա) բնութագիր վերջին աշխատավայրից:
- Փաստաթղթերը պետք է ներկայացնել մեկ անսվա ընթացքում (հայտարարությունը հրապարակելու օրվանից) հետևյալ հասցեով՝ Երևան, Գր. Լուսավորիչ 15, ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ (գիտական քարտուղարին), հեռ. 060-62-35-77:

Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 24.09.2019 թ.:
 "ГИТУИОН" ("Найка") газета НАН РА